ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «09» 02 2026 թ. N 287 Լ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝
   1) ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2026 թվականի միջոցառումները՝ համաձայն N 1 հավելվածի,
   2) 2026 թվականին օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության աջակցում միջազգային ցուցահանդեսների մասնակցության ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի,
   3) 2026 թվականին ազգային տաղավարով օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսների մասնակցության կարգը՝ համաձայն N 3 հավելվածի,

4) օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսներին ազգային տաղավարով մասնակցության պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի,

5) օտարերկրյա պետությունում և Հայաստանում գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև համանման միջոցառումների ցանկը՝ համաձայն N5 հավելվածի,

6) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքում:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թվականի
փետրվարի 9 -ի N 287 -Լ հրամանի

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

1. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Միջոցառման նպատակներն են.
   1) նպաստել արտահանելի հատվածի (ապրանքներ և ծառայություններ) ընդլայնմանը և թիրախային շուկաներ մուտք գործելուն,
   2) ապահովել արտաքին շուկաներում հայկական արտադրանքի և ծառայությունների ներկայացվածությունը և ճանաչելիության բարձրացումը,
   3) աջակցել տնտեսության ստեղծագործ և (կամ) նորարար ոլորտների զարգացմանը:
2. Միջոցառմամբ նախատեսվում է ունենալ աջակցության 3 հիմնական ուղղություն.

   1) Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության աջակցում,

   2) Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցության և (կամ) կազմակերպում,

   3) Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման և սպառողների կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում:
3. Միջոցառման ակնկալվող արդյունքներն են.
   1) տեղական արտադրանքի առաջմղման և ճանաչելիության բարձրացում,
   2) դիստրիբյուտորների և պոտենցիալ գնորդների ներգրավվում,
   3) արտահանման ծավալների աճ,
   4) արտահանման շուկաների դիվերսիֆիկացում:

2. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

4. Միջոցառման շրջանակներում շահառու են համարվում.

1) Հայաստանի Հանրապետությունում մշակող արդյունաբերության ոլորտն ներկայացնող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերը,

2) ոլորտային ասոցիացիաները, հիմնադրամները, հասարակական կազմակերպությունները:

3. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5. Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության աջակցում միջոցառման շրջանակներում նախատեսվում է թիրախային շուկաներում մշակող արդյունաբերության և ծառայությունների մատուցման ոլորտների՝ Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած կազմակերպություններին սույն Հրամանի N2 հավելվածով հաստատված ցուցահանդեսների մասնակցության աջակցության տրամադրում:

6. 2026 թվականի ընթացքում նախատեսվում է աջակցության տրամադրում օտարերկրյա պետությունում և Հայաստանի Հանրապետությունում անցկացվող միջազգային ցուցահանդեսների դեպքում՝ ազգային տաղավարի (այսուհետ՝ տաղավար) ձևաչափով:

7. Օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսներին ազգային տաղավարով մասնակցությունը կազմակերպվում է, եթե մասնակից ցուցադրողների թիվն առնվազն 10-ն է, բացառությամբ դեղագործական և թեթև արդյունաբերության ոլորտների ցուցահանդեսների, որոնց կազմակերպումը կիրականացվի, եթե մասնակից ցուցադրողների թիվը առնվազն 5-ն է: Օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսներին ազգային տաղավարով մասնակցությունը կազմակերպվում է հետևյալ կերպ՝

1) ցուցահանդեսային տարածքի վարձակալություն (մինչև 80%).
2) տաղավարի դիզայնի հաստատում (100%).
3) տաղավարի կառուցապատումը (100%).

4) տաղավարի բրենդի գեղարվեստական, տեսալսողական, մուլտիմեդիա ձևավորումը.
5) տաղավարի համար անհրաժեշտ սարքավորումների վարձակալությունը (մուլտիմեդիա սարքավորումներ, կահույք, տեղեկատվական կրպակ, գովազդային վահանակներ՝ այդ թվում էլեկտրոնային).
6) միջազգային ցուցահանդեսի կատալոգում ցուցադրողների մասին տեղեկատվության տեղադրումը.
7) տաղավարի կառուցապատման և ցուցահանդեսի ընթացքում ձևավորված կոմունալ ծախսերի վճարումը.
8) միջազգային ցուցահանդեսի կազմակերպչի կողմից ցուցադրողների գրանցման և պարտադիր այլ վճարների իրականացումը.
9) միջազգային ցուցահանդեսին մասնակցության նպատակով տպագիր նյութերի հրատարակումը:

7.1. Օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսին ազգային տաղավարով տարածքի վարձակալության (գրանցման և մասնակցության) պայմանագրով նախատեսված ընդհանուր ծախսերի և կազմակերպչի կողմից ներկայացված այլ պարտադիր վճարների առնվազն 20%-ը (սույն հավելվածի 7-րդ կետի համապատասխան՝ անհատապես կամ այլ կազմակերպության միջոցով) պարտավոր է կատարել ցուցահանդեսի յուրաքանչյուր մասնակից իր մասնաբաժնի չափով՝ արտարժույթին համապատասխան միջազգային ցուցահանդես կազմակերպող ընկերությանը՝ ուղիղ փոխանցմամբ (բացառապես մասնակցի կողմից՝ իր անունից և իր հաշվից): Վճարումը հավաստող անդորրագիրը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն 2 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով կամ առձեռն ներկայացնելուց հետո ծախսերի մինչև 80% (սույն հավելվածի 7-րդ կետի համապատասխան) ֆինանսավորումը իրականացվում է 1165 Ներդրումների և արտահանման խթանման՝ «11002. Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ» ծրագրին հատկացված պետական բյուջեի միջոցների հաշվին:

7.2. Օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսներին միասնական ազգային տաղավարում ցուցադրվող արտադրանքի բեռնափոխադրման ծախսերը հոգում է մասնակից ցուցադրողը՝ իր ֆինանսական միջոցների հաշվին:

8. Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցությունը և (կամ) կազմակերպումը նպատակաուղղված են օտարերկրյա երկրների հետ առևտրատնտեսական համագործակցության համատեղ նիստերի շրջանակներում օտարերկրյա և հայ գործարարների, պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսության, նրա առանձին ոլորտների և ճյուղերի զարգացման հնարավորությունների ներկայացմանը և քննարկմանը, հայ գործարարների համար արտերկրում նոր գործարար կապերի հաստատման և նոր շուկաներ մուտքի աջակցությանը:

9. Գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև համանման այլ միջոցառումների մասնակցության և կազմակերպման ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է ծրագրին հատկացված պետական բյուջեի միջոցների հաշվին: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է հետևյալ գործողությունները՝

1) ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կարող է օտարերկրյա պետությունում և Հայաստանի Հանրապետությունում գործարար համաժողովների, շնորհանդեսների, ինչպես նաև համանման այլ միջոցառումների մասնակցության և կազմակերպման համար վարձակալել տարածքներ, դահլիճներ, տեխնիկական միջոցներ (մուլտիմեդիա սարքավորումներ և այլն), ձեռք բերել թարգմանչական ծառայություններ, կազմակերպել հյուրասիրություն, իրականացնել գովազդային նյութերի պատրաստում և տպագրություն,
2) Հայաստանում անցկացվող գործարար համաժողովների ժամանակ արտերկրից ժամանած հյուրերի համար ծախսերը կարող են ներառել պատմամշակութային հուշարձաններ, թանգարաններ, արվեստի կենտրոններ այցելությունները (մուտքի տոմս և գիդի ծառայություն) և տրանսպորտային փոխադրումները:

Միջոցառման շրջանակներում ակնկալվում է մասնակցել և (կամ) կազմակերպել առնվազն 6 գործարար համաժողով և (կամ) այլ համանման միջոցառում:

10. **Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի ճանաչելիության բարձրացման և սպառողների կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում** միջոցառման շրջանակներում նախատեսվում է հետևյալ գործողությունները՝

1) գովազդային արշավների կազմակերպում, այդ թվում՝ հայկական արտադրանքի վերաբերյալ բուկլետների և կատալոգների հրատարակում,
2) արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվական նյութերի, այդ թվում արտերկրյա ընկերությունների վերաբերյալ տվյալների բազաների ձեռք բերում և տրամադրում ընկերություններին,
3) արտերկրում հայկական արտադրանքի համտեսների, շնորհանդեսների կազմակերպման և անցկացմանն աջակցության տրամադրում:

Ընդհանուր առմամբ, միջոցառման շրջանակներում ակնկալվում է նպատակային շուկաներում և (կամ) Հայաստանի Հանրապետությունում տեղական արտադրանքի առաջմղման 6 միջոցառման կազմակերպում և (կամ) մասնակցություն:

4. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

11. Սույն ծրագրի 5-10-րդ ենթակետերով նախատեսված միջոցառումները իրականացվում է Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 300.000.0 հազ. դրամի չափով:

Հավելված N2

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2026 թվականի

փետրվարի 9-ի N 287-Լ հրամանի

ՑԱՆԿ

2026 ԹՎԱԿԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

« 1. «Gulfood 2026» սննդի և ըմպելիքի 30-րդ միջազգային ցուցահանդես- հունվարի 26-ից 30-ը (Դուբայ, Միացյալ Արաբական Էմիրություններ),

2. «Foodex Japan» սննդի և խմիչքների միջազգային ամենամյա ցուցահանդես - 2026 թվականի մարտի 10-ից 13-ը (Տոկիո, Ճապոնիա),

3. «Ismailovo shoes 2026» կոշիկի և կաշվե իրերի ցուցահանդես – օգոստոս (Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն),
4. «Texworld Paris 2026» հագուստի և գործվածքի մատակարարման միջազգային ցուցահանդես- (Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն),
5. «CPHI Worldwide 2026» դեղագործական միջազգային ցուցահանդես – հոկտեմբերի 6-ից 8-ը (Միլան, Իտալիայի Հանրապետություն),
6. «BCB Convent Berlin 2026» գինու և ոգելից խմիչքների միջազգային ցուցահանդես- հոկտեմբերի 12-ից 14-ը (Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն),
7. «Sial-2026» սննդի և խմիչքի միջազգային ցուցահանդես- հոկտեմբերի 17-ից 21-ը (Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն),
8. Չինաստանի 9-րդ միջազգային ներմուծման միջազգային ցուցահանդես- նոյեմբերի 5-ից 10-ը (Շանհայ, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն):»:

Հավելված N 3
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թվականի
հունվարի 9 -ի N 287-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ազգային տաղավարով միջազգային ցուցահանդեսներին մասնակցության հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, ոլորտը ներկայացնող ասոցիացիաների, հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների վրա, որոնք մասնակցելու են միջազգային ցուցահանդեսներին:
3. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական սահմանումները՝
   1) կազմակերպիչ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Միջազգային համագործակցության վարչություն,
   2) նախաձեռնող՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում (կամ) Նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպություն, ՀՀ առևտրարդյունաբերական պալատ, Գործարարների և արդյունաբերողների միություն, գործարար ոլորտը ներկայացնող այլ միություններ, հիմնադրամներ, ակումբներ, հասարակական կազմակերպություններ,
   3) հանձնաժողով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով ձևավորված հանձնաժողով, որտեղ Նախարարը հանդիսանում է հանձնաժողովի նախագահը և ընդգրկված են Նախարարի բոլոր տեղակալները,
   4) ցուցադրող՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ոլորտը ներկայացնող ասոցիացիա, հիմնադրամ,

հասարակական կազմակերպություն, որը մասնակցում է ցուցահանդեսին և ցուցադրում է իր կողմից արտադրված ապրանքներ և (կամ) ծառայություններ,

5) միջազգային ցուցահանդես՝ օտարերկրյա պետությունում կազմակերպված ցուցահանդես,

6) ազգային տաղավար՝ հանդիսանում է միջազգային ցուցահանդեսի անբաժանելի մասը, որտեղ տեղակայված են ազգային ցուցադրողները,

7) ուղեկցող միջոցառում՝ ցուցահանդեսի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կազմակերպված միջոցառում (գործարար համաժողով, հանդիպումներ B2B ձևաչափով, գովազդային-տեղեկատվական լուսաբանում տեղական և արտասահմանյան լրատվամիջոցներում, այլ իրադարձություն),

8) ցուցահանդեսային տեղեկագիր՝ էլեկտրոնային կամ տպագիր փաստաթուղթ, որը պարունակում է ցուցահանդեսի մասնակիցների ցանկը, կոնտակտային տվյալները և ցուցահանդեսին առնչվող այլ տեղեկություններ:

9) միջազգային ցուցահանդես կազմակերպող ընկերություն՝ օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսի կազմակերպիչ հանդիսացող ընկերություն:

2. ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Կազմակերպիչը հստակ սահմանում է միջազգային ցուցահանդեսներին մասնակցության նպատակները, ոլորտները, թեման, ներառյալ՝ ցանկալի արդյունքներն ու ոլորտային ազդեցությունը և միջազգային ցուցահանդեսների մասնակցության առաջարկությունների ստացման հրավերները մինչև հունիսի 1-ը էլեկտրոնային և տեղեկատվության փոխանցման այլ հասանելի միջոցներով ծանուցում է նախաձեռնողներին:

5. Նախաձեռնողը յուրաքանչյուր տարի, մինչև հուլիսի 1-ը, կազմակերպչին է ներկայացնում հաջորդ տարվա ազգային տաղավարով միջազգային ցուցահանդեսի կազմակերպման առաջարկության հայտերը, իսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման (կամ) Նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպության դեպքում՝ համաձայնեցված տվյալ ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հետ:

6. Նախաձեռնողի կողմից ազգային տաղավարով միջազգային ցուցահանդեսների մասնակցության առաջարկության հայտին կից ներկայացվում է մասնակցության ոլորտային նպատակահարմարության վերաբերյալ հիմնավորում, այդ թվում՝

1) միջազգային ցուցահանդեսին ՀՀ մասնակցությունից նախաձեռնողի կողմից ակնկալվող արդյունքները, ինչպես նաև մասնակցության պարագայում Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա ազդեցության գնահատականները,
2) միջազգային ցուցահանդեսի համառոտ նկարագրությունը, որի շրջանակներում նախաձեռնվում է ազգային տաղավարով մասնակցությունը, պոտենցիալ այցելուների քանակն ու աշխարհագրությունը,
3) ազգային տաղավարի նախնական չափերը և ակնկալվող ցուցադրողների թիվը,
4) ազգային տաղավարի՝ ըստ ուղղությունների նախնական գումարը:

7. Կազմակերպչի կողմից ազգային տաղավարով միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ցանկի ձևավորումն իրականացվում է ներկայացված առաջարկությունների հիման վրա:

8. Կազմակերպիչը ազգային տաղավարով միջազգային ցուցահանդեսների մասնակցության առաջարկությունները տարեկան ցանկում (այսուհետ՝ ցանկ) ներառելիս հաշվի է առնում.

1) առաջարկվող միջազգային ցուցահանդեսի մասնակցության համապատասխանությունը՝ սահմանված նպատակներին,
2) միջազգային ցուցահանդեսի թեմայի համապատասխանությունը՝ հայ արտահանողների պահանջներին,
3) հայկական ապրանքների արտահանման աշխարհագրական դիվերսիֆիկացումը,
4) յուրաքանչյուր միջազգային ցուցահանդեսի ֆինանսավորման ծավալների մասին տեղեկատվությունը՝ ըստ ծախսման ուղղությունների:

9. Կազմակերպիչը՝ ազգային տաղավարով միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ցանկը, բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացնում է հանձնաժողովի քննարկմանը:

10. Հանձնաժողովը քննարկում և ձայների մեծամասնությամբ հաստատում է միջազգային ցուցահանդեսների մասնակցության ցանկը: Ձայների հավասար բաշխման դեպքում, նախապատվությունը տրվում է հանձնաժողովի նախագահի ձայնին:

11. ՀՀ էկոնոմիկայի նախարարի հրամանի հաստատումից հետո կազմակերպիչը սկսում է միջազգային ցուցահանդեսների նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

12. Նախաձեռնողը՝ միջազգային ցուցահանդեսներին մասնակցության տարեկան ցանկը հաստատելուց հետո, օրացուցային տարվա ընթացքում, անհրաժեշտության դեպքում ցուցահանդեսների ցանկում փոփոխությունների և (կամ) լրացումների առաջարկներ է ներկայացնում կազմակերպչին:

13. Նախաձեռնողի կողմից՝ ցուցահանդեսի կայանալուց առնվազն 90 օր առաջ չներկայացված առաջարկությունները կազմակերպչի կողմից չեն դիտարկվելու:

14. Միջազգային ցուցահանդեսին ազգային տաղավարով մասնակցության ծախսերը կարող են ներառել.

1) ցուցահանդեսային տարածքի վարձակալություն,
2) տաղավարի դիզայն, կառուցապատում,
3) ազգային տաղավարի բրենդի գեղարվեստական, տեսալսողական, մուլտիմեդիա ձևավորում,
4) տաղավարի համար անհրաժեշտ սարքավորումների վարձակալություն (մուլտիմեդիա սարքավորումներ, կահույք, տեղեկատվական կրպակ, գովազդային վահանակներ),
5) միջազգային ցուցահանդեսի կատալոգում ցուցադրողների մասին տեղեկատվության տեղադրում,
6) կոմունալ ծախսեր, միջազգային ցուցահանդեսի կազմակերպչի կողմից ցուցադրողների գրանցման և այլ պարտադիր վճարներ,
7) միջազգային ցուցահանդեսին մասնակցության նպատակով տպագիր նյութերի հրատարակում:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԻ, ՑՈՒՑԱԴՐՈՂԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

15. Կազմակերպիչը՝

1) իրականացնում է ազգային տաղավարով միջազգային ցուցահանդեսին մասնակցության գործողությունների ծրագրի մշակումը,
2) ցուցահանդեսին մասնակցության վերաբերյալ իրազեկում է իրականացնում Նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրված հայտարարության, ինչպես նաև էլեկտրոնային ծանուցումների և տեղեկատվության փոխանցման այլ հասանելի միջոցներով,
3) կազմակերպությունները էլեկտրոնային գրանցման թերթիկի օգնությամբ ցուցահանդեսին մասնակցության համար գրանցվում են մինչև հայտարարությամբ նշված վերջնաժամկետը,
4) միջազգային ցուցահանդեսին մասնակցության համար դիմած կազմակերպությունների տվյալները ուսումնասիրվում են հանձնաժողովի կողմից և վերջնաժամկետի լրանալուց հետո 14 աշխատանքային օրվա ընթացքում միջազգային ցուցահանդեսին մասնակցության համար դիմած կազմակերպությունները ծանուցվում են հանձնաժողովի կողմից ցուցադրողի մասնակցության հաստատման կամ մերժման մասին,
5) միջազգային ցուցահանդեսին մասնակցության համար դիմած կազմակերպության հաստատումից հետո կազմակերպիչը մասնակցության պայմանագիր է կնքում ցուցադրողի հետ,
6) համագործակցում է օտարերկրյա կազմակերպությունների, առևտրային ներկայացուցիչների, ոլորտը ներկայացնող մասնագետների հետ և ապահովում է միջազգային ցուցահանդեսին ազգային տաղավարով մասնակցության հարցերի լուծումը,
7) ապահովում է ազգային տաղավարի ճարտարապետատեխնիկական լուծման մշակումը՝ ներառյալ տարածքի վարձակալության, տաղավարի դիզայնի, կառուցապատման և ձևավորման աշխատանքների համար անհրաժեշտ պայմանագրերի կնքումը,

8) իրականացնում է միջազգային ցուցահանդեսի ազգային տաղավարի կառուցապատման աշխատանքների ընդունումը,

9) միջազգային ցուցահանդեսի անցկացման ժամանակահատվածում իրականացնում է ազգային տաղավարի կառավարման աշխատանքները,

10) յուրաքանչյուր միջազգային ցուցահանդեսի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ներկայացնում է իր կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն,

11) ցուցադրողների համար պատրաստում և տրամադրում է միջազգային ցուցահանդեսն ընդունող երկրի բիզնես միջավայրի վերաբերյալ տեղեկատվական և վերլուծական նյութեր, տվյալ երկրի գործարար շրջանակների վերաբերյալ տեղեկատվություն,

12) իրականացնում է միջազգային ցուցահանդեսի մասնակցության խորհրդատվական աշխատանքներ,

13) ներգրավում է պոտենցիալ օտարերկրյա գործընկերներ՝ այցելելու ազգային տաղավար,

14) մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը հանձնաժողովին է ներկայացնում իրականացված միջազգային ցուցահանդեսների վերաբերյալ ամփոփ հաշվետվություն.

ա) գործողությունների ծրագրով նախատեսված նպատակներին հասնելու արդյունքների վերաբերյալ,

բ) ցուցադրողների կողմից անցկացված հանդիպումների և բանակցությունների քանակի վերաբերյալ,

գ) ցուցադրողների կողմից ստորագրված պայմանագրերի քանակի, ինչպես նաև դրանց փաստացի իրագործման վերաբերյալ,

դ) հարակից կատարված աշխատանքների և դրանց արդյունքների մասին,

ե) իրականացված ծախսերի վերաբերյալ:

16. Ցուցադրողը՝

1) պետք է ունենա 3 տարվա աշխատանքային գործունեության և առնվազն 1 տարվա սեփական արտադրանքի արտահանման փորձառություն: Առանձին դեպքերում՝ հանձնաժողովն իրավասու է որպես խրախուսման միջոց թույլատրել արտահանման

ներուժ ունեցող, սակայն արտահանում չիրականացրած ընկերությունների մասնակցությունը:

2) ապահովում է միջազգային ցուցահանդեսին կազմակերպության պատշաճ նախապատրաստումը և մասնակցությունը, ցուցահանդեսի շրջանակներում կազմակերպում և անցկացնում է հանդիպումներ, բանակցություններ օտարերկրյա գործընկերների ու պոտենցիալ գնորդների հետ, ազգային տաղավար այցելելու համար ներգրավում է օտարերկրյա գործընկերներին,

3) միջազգային ցուցահանդեսի ավարտից հետո շարունակում է ցուցահանդեսի ընթացքում հաստատված գործարար կապերի ամրապնդման աշխատանքները և միջոցներ է ձեռնարկում՝ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների իրագործման ուղղությամբ, ապահովում է արտադրանքի մատակարարման համար ստորագրված պայմանագրերի կատարումը,

4) միջազգային ցուցահանդեսի ավարտից հետո 20 օրվա ընթացքում կազմակերպչին է ներկայացնում նախնական հաշվետվություն մասնակցության արդյունքների մասին,

5) միջազգային ցուցահանդեսի ավարտին հաջորդող մեկ տարվա ընթացքում՝ եռամսյակը մեկ՝ կազմակերպչին ներկայացնում է կազմակերպության՝ միջազգային ցուցահանդեսին մասնակցության արդյունքների մասին հաշվետվությունը:

6) Ցուցադրողը ազգային տաղավարով կարող է ներկայանալ միջազգային ցուցահանդեսին, եթե առանձին տաղավարով՝ այդ թվում կոմերցիոն տաղավարով, ներկայացված չէ նույն ցուցահանդեսին:

Հավելված N 4
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2026 թվականի
փետրվարի 9 -ի N 281-Լ հրամանի

Օրինակելի ձև

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «--- --- -------»

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս գլխավոր քարտուղար ---------- մի կողմից, և ---------- (այսուհետ՝ Շահառու), ի դեմս ----------, (այսուհետ՝ Կողմեր), մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը կազմակերպում է օտարերկրյա պետությունում միջազգային ցուցահանդեսին (այսուհետ՝ Ցուցահանդես) ազգային տաղավարով Շահառուի մասնակցությունը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1 Պահանջել փոխհատուցում Ցուցահանդեսին Շահառուի մասնակցության ապահովման հետ կապված Նախարարության իրականացրած փաստաթղթերով հիմնավորված ծախսերի 100 տոկոսի չափով, եթե Շահառուն՝

չի մասնակցում կամ հրաժարվում է մասնակցել Ցուցահանդեսին, այդ թվում՝ եթե վերջինս չի մասնակցել Ցուցահանդեսի աշխատանքների բոլոր օրերին կամ զրկվել է Ցուցահանդեսին մասնակցելու հնարավորությունից միջազգային ցուցահանդեսի կազմակերպչի (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից սահմանված մասնակցության պայմանները կամ կանոնները խախտելու պատճառով:

2.2 Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 Կազմակերպչի հետ վարել բանակցություններ, ընտրել տաղավարը, համաձայնեցնել մասնակցության պայմանները,

2.2.2 Կազմակերպել տաղավարի տարածքի վարձակալության (գրանցման և մասնակցության) (մինչև 80%), իսկ դիզայնի, կառուցապատման, ձևավորման,

անհրաժեշտ կահույքի և սարքավորումների վարձակալման համար անհրաժեշտ աշխատանքները (100%),

2.2.3 Շահառուին տրամադրել Ցուցահանդեսի անցկացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություն,

2.2.4 Օժանդակել Շահառուի կողմից նոր գործարար կապերի հաստատմանը,

2.2.5 Ցուցահանդեսի ամբողջ ընթացքում օժանդակել Շահառուի աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

2.3 Շահառուն իրավունք ունի՝

2.3.1 Վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես ծանուցելով մյուս կողմին՝ փոխհատուցելով Ցուցահանդեսին Շահառուի մասնակցությունն ապահովելու նպատակով Նախարարության կողմից կատարված փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

2.4 Շահառուն պարտավոր է՝

2.4.1 Իրականացնել իր կողմից կատարվելիք ծախսերը՝ ճանապարհածախս, կացություն, բեռնափոխադրում,

2.4.2 Իրականացնել Կազմակերպչի կողմից սահմանված՝ Ցուցահանդեսին շահառուի գրանցման և մասնակցության, տարածքի վարձակալության պայմանագրով նախատեսված այլ պարտադիր վճարումները (առնվազն 20%՝ անհատապես կամ այլ կազմակերպության միջոցով (_____)),

2.4.3 Պահպանել Կազմակերպչի կողմից մասնակցության պայմանագրով սահմանված պայմանները:

2.4.4 Շահառուն Ցուցահանդեսի աշխատանքային ժամերին ազգային տաղավարի իրեն հատկացված հատվածում ապահովում է.

ա)մշտապես մեկ ներկայացուցչի առկայություն, որը պետք է տիրապետի առնվազն մեկ միջազգային օտար լեզվի՝ ապահովելով տվյալ երկրում բանակցություններ վարելու պատշաճ մակարդակ, ինչպես նաև տիրապետի բավարար տեղեկատվության ներկայացվող արտադրանքի վերաբերյալ,

բ)իր արտադրանքի համտես (կիրառվում է սննդի և խմիչքի ցուցահանդեսների դեպքում)՝ ապահովելով անհրաժեշտ սպասքի պարագաներ,

գ)տաղավարի ընդհանուր ձևավորումը չխախտող պաստառների և այլ ցուցադրությունների տեղադրում:

2.4.5 Ցուցահանդեսի արդյունավետության գնահատմանը նպաստելու նպատակով ըստ Նախարարության ներկայացրած պահանջի, ներկայացնել արդյունավետության գնահատման հաշվետվություն (ցուցահանդեսի ավարտից հետո 3 ամսվա ընթացքում):

2.4.6 Ըստ նշանակության օգտագործել ցուցահանդեսի համար իրեն հանձնված գույքը և նշված գույքը վնասելու դեպքում համապատասխան չափով (տվյալ գույքի համար Նախարարության կողմից կատարված ծախսեր) փոխհատուցել Նախարարության կրած վնասները:

2.4.7 Սույն պայմանագրի 2.4.6-ով պատճառված վնասի դեպքերում փոխհատուցել Նախարարության կատարած ծախսերը: Փոխհատուցումը պետք է իրականացվի Նախարարության կողմից նման պահանջ ներկայացվելու օրվանից սկսած 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

3.2 Շահառուն և Նախարարությունը սույն պայմանագրի շրջանակներում պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ «ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ»

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Շահառուի և Նախարարության կողմից:

6.2 Սույն պայմանագիրը կազմված է —— էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկական օրինակ:

6.3 Շահառուի և Նախարարության վերակազմակերպման դեպքում վերակազմակերպվող կողմի իրավունքները և պարտականությունները փոխանցվում են վերջինիս իրավահաջորդին:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարություն
Իրավաբանական հասցե՝ 0010, ք. Երևան,
Մ. Մկրտչյան 5 փ.
ՀՎՀՀ՝ 02698604
Պետական գանձապետական
գործառույթների վարչություն
Հաշվեհամար՝ 900011010643
Էլեկտրոնային հասցե՝
secretariat@mineconomy.am

Գլխավոր քարտուղար

_____

(ստորագրություն, Կ.Տ.)

ՇԱՀԱՌՈՒ

Շահառուի անվանում

Հասցե՝

ՀՎՀՀ՝

Բանկային տվյալներ՝
Բանկային հաշվեհամար
Էլեկտրոնային հասցե

Շահառու հանդիսացող պատասխանատու անձ

_____

(ստորագրություն, Կ.Տ.)

Հավելված N 5

ՀՀ էկոնոմիկայի նախարարի

2026 թվականի

փետրվարի 9-ի N 287Լ հրամանի

ՑԱՆԿ

2026 ԹՎԱԿԱՆԻՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ (ՖՈՐՈՒՄՆԵՐԻ), ՇՆՈՐՀԱՆԴԵՍՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

« 1) Հայաստան Հանրապետության և Ավստրիայի Հանրապետության միջև գործարար համաժողով -ապրիլի 29-ին (Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն),

2) Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև գործարար համաժողով (Երևան, Հայաստանի Հանրապետություն),

3) Հայաստանի Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության միջև գործարար համաժողով - (Երևան, Հայաստանի Հանրապետություն),

4) Հայաստանի Հանրապետության և Իրաքի Հանրապետության միջև գործարար համաժողով - (Երևան, Հայաստանի Հանրապետություն),

5) Հայաստանի Հանրապետության և Արաբական Միացյալ Էմիրությունների միջև գործարար համաժողով (Երևան, Հայաստանի Հանրապետություն),

6) Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև գործարար համաժողով (Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)»: